

ՅՈՋԵՑ ԿԱՐՍՏԸ ԼԵՂՈՒՆԵՐԻ ՅԵՌԱՎՈՐ ԳԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ռ. ԳԱԳԻՆՅԱՆ

Գերմանացի անվամի հայագետ և լեզվաբան Յոզեֆ Կարստի գրչին են պատկանում լեզուների ցեղակցությանը նվիրված տասնյակ աշխատություններ, որոնք հանրավի մոռացության են մատնված ոչ միայն մեզանում, այլև գրեթե ամբողջ աշխարհում, ընդամին մասն ան հայրենիք Գերմանիայում: Ըիշտ է, վերոհիշյալ մեծագրությունները չունեն զուտ լեզվաբանական ուղղվածություն, այլ, որպես կանոն, պարունակում են մասն ազգագրական, մարդաբանական և դիցաբանական հետազոտություններ, սակայն մարանցում առկա են բավականին մեծ թվով լեզվական համեմատություններ, որոնք Կարստի տեսական հայացքների նկատմամբ ժամանակին ծավալված բուն քննդատության հետևանքով չեն ստացել իրենց արժանի գնահատականն ու անուշադրության են մատնվել: Սրա հիմնական պատճառը մասն քննդատական վերաբերմունքն էր լեզուների ցեղակցության ավանդական ըմբռնումների նկատմամբ: Բանն այն է, որ Կարստը թեև չէր ժխտում լեզուների ծագումնաբանական դասակարգումը, սակայն ցեղակցական ընդհանրություններ էր տեսնում ինչպես տարբեր լեզվաընտանիքների, այնպես էլ մի շարք անկախ լեզուների միջև, ինչպիսիք են բասկերենն ու շուվերերենը՝ այսպիսով ընդունելով մասն, այսպես կոչված, մասնակի (partiell) ցեղակցությունը:

Կարստի տեսական հայացքների ակունքները կարելի է գտնել XIX դարի վերջի և XX դարի սկզբների լեզվաբանական կարևորագույն հոսանքների մեջ: Խոսքը հիմնականում վերաբերում է լեզվաընտանիքների միջև առկա ներքին կապի տարբեր մեկնաբանություններին՝ ըստ լեզվի զարգացման երկու հիմնական ուղղությունների՝ զուգամիտվող և տարամիտվող, այսինքն՝ հիմնված համապատասխանաբար կամ լեզուների խառնման և խաչավորման, ընդհանուր ենթաշերտի, կամ էլ լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության գաղափարի վրա:

Անշուշտ, Կարստը, լինելով իր ժամանակի ծնունդ, չէր կարող անմասն մնալ մասն ազդեցություններից: Նա համեմատական լեզվաբանության ասպարեզ մտավ այն ժամանակ, երբ արդեն հրապարակի վրա էին ինչպես լեզուների խաչավորման և խառը լեզվի ջատագովներ Հ. Օուխարդտի, Ն. Մառի, Պ. Օմիդտի և մարանց գաղափարակիցների, այնպես էլ Հ. Պեդերսենի, Հ. Մյուլլերի, Ա. Կյունիի և Ա. Տրոմբետիի՝ լեզուների հեռավոր ցեղակցությանը նվիրված աշխատությունները:

Գեռնա 1903-ին դանիացի անվամի լեզվաբան Հ. Պեդերսենը ըշում է մի շարք լեզվաընտանիքների ցեղակցության փաստեր՝ Թեև մարանց առաջ էլ եղել են մասն փորձեր, ինչպես օրինակ՝ պատմաբանական լեզվաբանության հիմնադիր Ֆր. Բոպպի կողմից, որը փորձում էր գտնել հնդեվրոպական և քարթվելական լեզուների հեռավոր ցեղակցության փաստեր՝, սակայն հարկ է ըշել, որ Պեդերսենն առաջինն էր, որ խոսում էր ոչ թե երկու, այլ մի քանի լեզվաընտանիքների ցեղակցության մասին, մասնավորապես հնդեվրոպական, աֆրոասիական և որպալ-այթայան՝ Նրան է պատկանում մասն մոտորատիկ տերմինը՝ լատիներեն noster (մերային) բառից, որը մինչև այժմ

¹ Տե՛ս H. Pedersen, *Türkische Lautgesetze*, «ZDMG», No 57, 1903:

² Տե՛ս Fr. Bopp, *Die kaukasischen Glieder des indoeuropäischen Sprachstammes*, Berlin, 1848:

³ Տե՛ս H. Pedersen, *Աշվ. աշխ.*, էջ 560:

էլ լայն տարածում ունի գիտության մեջ, թեև արդեն առաջարկվել են այլ տերմիններ, ինչպես բորեայան⁶, սիբիրեվրոպական⁶ և այլն:

Լեզվաբանության պատմության մեջ փորձեր են եղել նաև ցեղակցական ընդհանրություններ գտնել ուրալյան և ալթայան (Վ. Օտո⁶, Մ. Կաստրեն⁷), հնդեվրոպական և սեմական (Հ. Մյուլլեր⁸, Ա. Կյունի⁹) լեզուների միջև: Հնդեվրոպական նախալեզվի հետ փորձում էին կապել ոչ միայն տարբեր լեզվաընտանիքներ, այլև մի շարք անկախ լեզուներ: Այսպես, դեռևս 1925 թ. ֆրանսիացի լեզվաբան Օ. Օտրանն իր «Օուսերերենը և հնդեվրոպերենը» աշխատության մեջ փորձ է անում ծագումնաբանական ընդհանրություն գտնել շումերերենի և հնդեվրոպական նախալեզվի միջև¹⁰: Իսկ իսպանացի լեզվաբան Ֆ. Կ. Գիսասոլան համաման փորձեր է կատարում բասկերենի հետ կապված¹¹: Հեռավոր ցեղակցության նկատմամբ ծայրահեղ վերաբերմունք է ցուցաբերում իտալացի լեզվաբան Ա. Տրոմբետին¹²՝ փորձելով բերել աշխարհի բոլոր լեզուների հեռավոր ցեղակցության փաստեր՝ այսպիսով խոսելով լեզուների միասերության մասին¹²:

Թեև Կարստը քաջատեղյակ էր վերոհիշյալ գրեթե բոլոր աշխատություններին (կապածելի է միայն Գիսասոլայի աշխատությունը), սակայն սկզբունքորեն գերապատվությունը տալիս էր լեզվի զուգամետ զարգացմանը, որին նա տալիս էր ծայրահեղ մեկնաբանություն, այսինքն՝ լեզուները անընդհատ գտնվում են աստիճանական անցումների գործընթացում: «...Չկան ստույգ սահմանագծված ձագեր և լեզվաընտանիքներ, այլ, ըստ բոլոր իրերի հավերժ գետի օրենքի, այս պարագայում էլ, տիրում է հարատև զարգացող աստիճանավորումը և համահարթումը, այլ կերպ՝ դրացիական խառնումն ու խաչավորումը»¹³:

Այստեղ Կարստը հետևում է դեռևս Յ. Օմիդտից և Հ. Օուխարդտից եկող, համապատասխանաբար, լեզվական աստիճանական անցումների և աշխարհագրական համահարթման դրույթներին: Հայտնի է, որ Օմիդտի աստիճանական անցումների տեսությունը, այլ կերպ՝ ալիքների տեսությունը, ենթադրում է մեկ լեզվի հայտնի բնորոշ գծերի անցումը մյուս լեզու՝ ալիքների այն շարժման տեսքով, որն առաջանում է ջուրը նետած քարի հետևանքով¹⁴: Հետագայում այս դրույթն իր զարգացումն ապրեց Հ. Օուխարդտի աշխարհագրական փոփոխակայնության տեսության մեջ (теория географического варьирования)¹⁵: Տարբերությունն այն էր, որ եթե Յ. Օմիդտը սահմանափակվում էր միայն մեկ լեզվաընտանիքով, այս դեպքում՝ հնդեվրոպական, ապա Օուխարդտի «աշխարհագրական փոփոխակայնության դրույթը» ծխտում էր լեզվական բոլոր սահմանների գոյությունը՝ պայմանական հասկացություններ համարելով խոսվածք, բարբառ, լեզու հասկացությունները¹⁶:

⁶ Տե՛ս Մ. Լ. Палаймитс, Прязык - генетическая или контактная общность, "Вопросы языкознания", 1978, 1:

⁷ Տե՛ս Ա. Б. Долгопольский, Гипотеза древнейшего родства языковых семей Северной Евразии с вероятностной точки зрения, "Вопросы языкознания", 1964, 2:

⁸ Տե՛ս W. Schott, Versuch über die tatarischen Sprachen, Berlin, 1836:

⁹ Տե՛ս М. А. Castrén, Nordische Reisen und Forschungen. V, St.-Petersburg, 1849:

¹⁰ Տե՛ս H. Möller, Indogermanisch und Semitisch, Kopenhagen, 1907:

¹¹ Տե՛ս A. Cuny, Etudes grammaticales sur le domaine des langues indo-européennes et chamito-sémitiques, Paris, 1924:

¹² Տե՛ս Ch. Autran, Sumérien et Indo-Européen, Paris, 1925:

¹³ Հմտ. Վ. Սարգսյան, Բասկերի ծագման անեղծվածը և հայկական լեռնաշխարհը, Եր., 2000, էջ 33-37:

¹⁴ Տե՛ս A. Trombetti, L'unità d'origine del linguaggio, Bologna, 1905:

¹⁵ J. Karst, Zur ethnischen Stellung der Armenier, «Husarjan», 1911, S. 399.

¹⁶ Տե՛ս J. Schmidt, Die Verwandtschaftsverhältnisse der indogermanischen Sprachen, Weimar, 1872, էջ 26-27:

¹⁷ Տե՛ս Գ. Шухардт, О классификации романских диалектов, Избранные статьи по языкознанию, Москва, 1950:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

Կարստի աստիճանական անցումներն ավելի մոտ են Օուխարդտի վերոհիշյալ դրույթին, քանի որ նա էլ, ինչպես Օուխարդտը, դուրս գալով մեկ լեզվաընտանիքի սահմաններից, լեզվական անցումների անընդհատականության տեսությունը տարածում է ամենատարբեր լեզվաընտանիքների վրա՝ անտեսելով լեզվական սահմանները և, ինչպես իր նախորդը, լեզվական անցումների անընդհատականության նախադրյալ համարում լեզուների խաչավորումն ու խառնումը: Ընդդեմ է, Կարստը լիովին չէր ժխտում լեզուների ծագումնաբանական դասակարգումը, սակայն դա համարում էր «ժամանակավոր միջոցառում, որը ենթակա է միայն բազմակողմանի ճշգրտման և ստուգումների»՝ ավելի ճիշտ սահմանումներ տալու համար»¹⁷, այստեղ էլ հարելով Յ. Օմիդտի հայտնի կարծիքին, ըստ որի նախալեզուն գիտական պատրանք է, որի շնորհիվ բավականին հեշտանում է հետազոտությունը¹⁸:

Քննադատելով ժամանակի լեզվաբանությունը՝ Կարստը, այսպիսով, լեզվաընտանիքների միջև արևկա ներքին կապը հիմնավորում է ինչպես լեզվական աստիճանական անցումների, լեզուների խառնման և խաչավորման միջոցով, այնպես էլ պատմական ժամանակներում գոյություն ունեցած ցեղային և լեզվական ընդհանրությամբ, որը մեր ժամանակներում հանդես է գալիս ընդհանուր ենթաշերտի տեսքով: Վերջինս Կարստի, այսպես կոչված, «երրորդ էթնիկական տարրն» է, այսինքն՝ այն էթնիկական և լեզվական ընդհանրությունը, որը միջին դիրք է գրավում հնդեվրոպական և սեմաքամյան լեզվաընտանիքների միջև և, չպատկանելով սրանցից որևէ մեկին, ենթադրում է ցեղակից լեզուների մի մեծ շրթա, որը ձգվել է Փոքր Ասիայից մինչև Պիրենեյան թերակղզի¹⁹: Սակայն ի տարբերություն Ն. Մառի, որին էլ, ի դեպ, պատկանում է վերոհիշյալ գիտաբանը, Կարստի «երրորդ էթնիկական տարրը», կարելի է ասել, կրկնակի «երրորդ» է, քանի որ այն, որպես այդպիսին, գործում է ինչպես պատմական, այնպես էլ նախապատմական ժամանակների համար: Բանն այն է, որ Կարստի այդ էթնիկական և լեզվական ընդհանրությունը միատարր չէ: Այն առաջացել է Եվրասիայի հյուսիսում և հարավում նախապատմական ժամանակներում տեղակայված երկու մեծ էթնիկական և լեզվական միավորների խաչավորումից՝ միջին դիրք գրավելով այդ երկուսի միջև: Իսկ ինչ վերաբերում է հյուսիսի և հարավի վերոհիշյալ նախապատմական ցեղային միություններին, ապա նրանց մանրամասն քննությունը մենք անմաստ ենք համարում, քանի որ նրանք, չունենալով որևէ պատմական հիմք, զուտ վարկածային բնույթ ունեն: Նշենք միայն, որ նրանք էլ իրենց հերթին ընկած են տարբեր լեզվաընտանիքների հիմքում: Այսպիսով, Կարստի հեռավոր ցեղակցության ըմբռնումները հիմնականում տատանվում են խառը լեզվի և ընդհանուր ենթաշերտի գաղափարների շրջանակներում: Ինչպես տեսնում ենք, նա նկատելի ծայրահեղության է հասել իր հայացքներում, որը վերաբերում է թե՛ լեզվի զուգամետ զարգացման և թե՛ ընդհանուր ենթաշերտի սահմանների նրա պատկերացումներին:

Ընդհանուր ենթաշերտի գոյությունը, ինչպես գիտենք, չի ժխտվում: Սակայն Կարստը, ինչպես ամենուր, այստեղ էլ հասնում է ծայրահեղության: Նա, ասես, վերադառնում է XIX դար և հարություն տալիս վաղուց արդեն իրենց սպառած տեսություններին, որոնք, ելնելով փոքրասիական լեզուների ցեղակցությունն ապացուցելու միտումից և հենվելով հիմնականում մարդաբանական տվյալների վրա, հետզհետե ընդլայնում էին այդ լեզվական ընդհանրության սահմանները: Արևմուտքում դրանք ներառում էին էտրուսկերենը, բասկերենը, լիգուրերենը (Պաուլի), իսկ արևելքում՝ էլամերենը, շումերերենը, կովկասյան լեզուները և այլն (Հոմել)²⁰:

¹⁷ J. Karst, *ԳՉՎ. աշխ.*, էջ 399:

¹⁸ St'u J. Schmidt, *ԳՉՎ. աշխ.*, էջ 31:

¹⁹ St'u H. Mapp, Яфетический Кавказ и третий этнический элемент в создании средиземноморской культуры, Избранные работы, т. 1, Ленинград, 1933:

²⁰ Հմտ. P. Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, Göttingen, 1896, էջ 291:

Ինչ վերաբերում է Կարստի համեմատական քննություններին, ապա պետք է նշել, որ դրանք ի տարբերություն նրա տեսական հայացքների, բավականին ուշագրավ են և ինքնին հետաքրքրական նյութ են մատուցում քննության համար: Առավել ևս, երբ այժմ լեզվաբանների հեռավոր ցեղակցության գաղափարը կրկին ասպարեզ է մղվել և դրվել ավելի լուրջ հիմքերի վրա: Դրանում, անշուշտ, իր մեծ ավանդն ունի խորհրդային լեզվաբան Վ. Մ. Իլիչ-Սվիտիչը: Նրան է պատկանում նյութերի ընդհանրացման և ճոստրատիկ նախալեզվի վերականգման առաջին փորձը: Նրա եռահատոր բառարանը, որը կրում է «Նոստրատիկ լեզուների համեմատության փորձ» խորագիրը, նվիրված է հնդեվրոպական, սեմաքամյան, դրավիդյան, քարթվելական, ալթայան և ուրալյան լեզուների համեմատական քննությանը և պարունակում է ճոստրատիկ լեզվի համար վերականգնված 378 միավոր, ընդ որում կասկածելի միավորների թիվը չի անցնում 5 տասնյակից²¹:

Այսպիսով, հիմք դրվեց, այսպես կոչված, նեոնոստրատիզմին: Իհարկե սա պատահական չէր և ուներ իր նախադրյալները: Խոսքը հիմնականում վերաբերում է այն հանգամանքին, որ եթե XIX դարում և XX դարի սկզբներին պատմահամեմատական լեզվաբանության առարկան գրեթե միայն հնդեվրոպական լեզուներն էին, ապա արդեն XX դարի 20-ական թվականներից մեծ թափ առան մի շարք այլ լեզվաբանների ուսումնասիրությունները: Մաս առ մաս մշակվեցին տարբեր լեզվաբանների համեմատական քերականությունները, որոնք հիմք հանդիսացան արդեն նախալեզուների համեմատական քննության համար:

Բացի Վ. Մ. Իլիչ-Սվիտիչից, մեր օրերում լեզուների հեռավոր ցեղակցությամբ են զբաղվել նաև Ա. Բ. Դոլգոպոլսկին՝ առաջ քաշելով չուկոտականաշատկյան լեզուների և շումերերենի ճոստրատիկ ընդհանրությանը պատկանելու վարկածը²², և Գ. Բ. Ջահուկյանը՝ խոսելով խոտի-ուրարտական և հնդեվրոպական լեզուների ցեղակցության մասին²³:

Ինչպես տեսնում ենք, լեզվաբանների միջև իրոք գոյություն ունեն առնչակցություններ, որոնք, իրենց բնույթով բացառելով փոխառության վարկածը, հաստատում են վերջիններիս սկզբնական ցեղակցությունը, որը և սկզբունքորեն ընդունելի է դարձնում Կարստի համեմատական քննությունները:

Հիմք ընդունելով ճոստրատիկ լեզվաբանության արդի տվյալները՝ փորձել ենք գտնել Կարստի համեմատական քննությունների ուսցիոնալ հատիկը և կատարել մասնապատասխան հաշվարկներ: Նշենք, որ մեզ համար հիմք է հանդիսացել Վ. Մ. Իլիչ-Սվիտիչի վերոհիշյալ բառարանը, որն ինչպես արդեն նշվել է, ներառում է հետևյալ վեց լեզվաբանների տվյալները՝ հնդեվրոպական, քարթվելական, սեմաքամյան, դրավիդյան, ալթայան և ուրալյան:

Արդյունքում քննությունից դուրս են մնացել Կարստի այն զուգահեռները, որոնք վերաբերում են շումերերենին, բասկերենին, հյուսիսկովկասյան և հիպերբորյան լեզուներին և այլն, քանի որ վերջիններս՝ ճոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցը դեռևս իր սպառիչ լուծումը չի ստացել:

Այսպիսով, հիշյալ հաշվարկների արդյունքում Կարստի համեմատական քննություններից առանձնացվել են թվով քսանմեկ զուգահեռներ, որոնք առկա են Վ. Իլիչ-Սվիտիչի բառարանում, և որոնք նախնական ցեղակցությունը ներկայումս գիտականորեն ապացուցված է:

Ի դեպ, Կարստի զուգահեռները ներառում են ինչպես բառային, այնպես էլ քերականական միավորներ, ընդ որում գերակշռում են վերջիններս՝ տասներեքը ութի հարաբերությամբ: Սա վկայում է Կարստի՝ լեզվական ցեղակցության ճիշտ ընկալման մասին, քանի որ, ինչպես հայտնի է, լեզուների ցեղակցությունն ապացուցելու հիմնական կովանը քերականական համապատասխանություններն են:

²¹ Տե՛ս В. М. Иллч-Свитыч, Опыт сравнения ностратических языков, т. 1-3, Москва, 1971-1984:

²² Տե՛ս А. Б. Долгопольский, Гипотеза древнейшего родства языковых семей Северной Евразии с вероятностной точки зрения, "Вопросы языкознания", 1964, 2:

²³ Տե՛ս Г. Б. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ер., 1963:

Թեև Կարստի զուգահեռներում առկա են բոլոր վեց լեզվաընտանիքների միավորները, սակայն զգալիորեն գերակշռում են հնդեվրոպական և հատկապես հայերենի միավորները, որը և զարմանալի չէ, եթե հաշվի առնենք, որ Կարստը նախ և առաջ հայազետ էր:

Հայերենի՝ այլ լեզվաընտանիքների հետ ունեցած համամասնությունը, ըստ մեր հաշվարկների, հետևյալն է՝ հայերենի և այթայան լեզուների միջև՝ ութ դեպք, հայերենի և քարթվելական լեզուների միջև՝ վեց դեպք, հայերենի և ուգրաֆիննական ու սեմաքամյան լեզուների միջև՝ երկուական դեպք, հայերենի և դրավիդյան լեզուների միջև՝ մեկ դեպք:

Չպետք է մոռանալ, սակայն, որ սա վերաբերում է միայն Կարստի համեմատական քննություններին և ոչ թե հայերենի՝ այլ լեզվաընտանիքների հետ ունեցած ընդհանրություններին ընդհանրապես:

Ինչևէ, այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ Կարստի համեմատական քննությունները, ի տարբերություն նրա տեսական հայացքների, քավականին հավաստի են և զուրկ չեն լուրջ գիտական հիմքից: Չի բացառվում նաև, որ ժամանակի ընթացքում գիտության նոր տվյալների լույսի ներքո նրա հավաստի զուգահեռների թիվը կըտրուկ աճի՝ կապված նոստրատիկ գերընտանիքի ընդլայնման և ընդհանրապես նոստրատիկ լեզվաբանության զարգացման հետ: Այսպիսով, չի կարելի արժանին չմատուցել Կարստին այն բանի համար, որ նա, ճիշտ նկատելով տարբեր լեզվաընտանիքների միջև առկա ներքին աղերսները (նաև հայերենի արտալեզվաընտանիքային աղերսները), չսահմանափակվեց իր ժամանակի գիտության մեջ տիրող կաղապարային դրույթներով և դրանով իսկ իր ավանդը ներդրեց լեզուների հեռավոր ցեղակցության գաղափարի զարգացման գործում:

А. Р. ГАГИНЯН - Иозеф Карст об отдаленном языковом родстве. - Известный немецкий арменист и лингвист Йозеф Карст относится к числу тех исследователей, которые всю свою жизнь посвятили выявлению родственных связей самых различных языков мира, в том числе и родственных отношений между различными языковыми семьями. Таким образом он внес свой вклад в исследование отдаленного родства языковых семей. Однако он не был признан в свое время, напротив, подвергался острой критике и был предан забвению. Это связано, в первую очередь, с его собственным пониманием языкового родства. Настоящая статья - попытка обнаружить причины такого отношения и переоценить его научное наследие с точки зрения современного ностратического языкознания.